Հավելված 1

Հաստատված է համայնքի ավագանու
23.03.2018թ. N 7-Ն որոշմամբ

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, կառավարումը հանդիսանում է համայնքային իշխանության կողմից պարտադիր կատարվող գործառույթ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության՝ համայնքում մշակված են քաղաքացիական պաշտպանության, զորահավաքային, ուժեղ երկրաշարժի դեպքում համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպման, ՀԱԷԿ-ի միջուկային և/կամ /ճառագայթային վթարի դեպքում բնակչության պաշտպանության պլանները, որոնք պարունակում են միջոցառումների ամբողջական համակարգ՝ ուղղված համայնքի բնակչության և նյութական արժեքների պաշտպանությանը, մարդկանց կյանքին և առողջությանը սպառնացող գործոնների ազդեցության վտանգի վերացմանը: Վերը նշված աշխատանքների արդյունավետ իրականացման համար համայնքի ղեկավարի /ՔՊ պետի/ որոշումներով և կարգադրություններով ստեղծվել են քաղաքացիական պաշտպանության վթարավերականգնողական կազմավորում, կոմունալ-տեխնիկական, գյուղ. կենդանիների և բույսերի պաշտպանության, տրանսպորտի, առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայություններ, հետախուզական, կապի և ազդարարման, երկու փրկարարական խմբեր:

Աղետների ռիսկերի նվազեցման նպատակով համայնքապետարանը կուժեղացնի վերահսկողությունը քաղաքում նոր կառուցվող և վերակառուցվող շենք – շինությունների՝ սկսած պլանավորումից մինչև շինարարության ավարտը, աղետակայուն և ժամանակակից քաղաքաշինական նորմերի պահպանման նկատմամբ:

Նախատեսվում է ԱԻՆ Արագածոտնի ՄՓՎ հետ համատեղ կազմակերպել և իրականացնել ՔՊ կազմավորումներում ընդգրկված անձանց վերապատրաստման և բնակչության ուսուցման դասընթացներ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն